


Հ. ՎՐԴ. ՄՈՒՇՅԱՆ

# Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Զոն Վենափառին

Արարատի երկնաքեր պատկերին դեմ հաղթ կեցած
Էջմիածի՛ն, երբ այսօր, կըվերցընես մըթամած
Սըգո շըղարշը դեմքեդ, պարման հոգիս անգամ մ'ալ
Կնրնըվի իր որդին գտնող մոր պես տառապյալ:

Տարիներու կարոտե վերջ, երբ հիմա շուքիդ տակ
Ծըվարած Քե՛զ կըդիտեմ, կընշմարեմ շատ հստակ
Քու ապագա փառքըդ մեծ, որ վստահ եմ, պիտ՝ ըլլա
Այնքան փայլուն, որքան չէ կրցած ըլլալ մինչ հիմա...:

Ո՛վ պապերուս անսակարկ արյամբ կերտված հուշարձան,
Պանդխտածին որդիներդ, իրենց նայվածքն յաղթական
Միշտ հավատքով Քե՛զ հառած պիտի փարին հետ այսու,
Որ Դուն դառնաս անխորտակ ու ըլլաս ջահ լուսատու:

Ու նորոգված գմբեթիդ կամարներուն տակ ընդմիշտ
Գանձակալից նորաօծ թող պատգամներն հնչեն միշտ,
Որպեսզի մենք՝ թափառող, վըտարանդի զավակներդ,
Հառած մեր ա՛չքը Քեզի, տանինք շողեր բորբ լույսեդ: